

Հաստատված է՝

ԵՄԽՀ-ի գիտական խորհրդի

Գիտխորհրդի նախագահ՝

Ա.Ս.Աղաբաբյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ

Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի Ֆ Ա Կ ՈՒ Լ Տ Ե Տ Ի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Սույն կանոնակարգը սահմանում է համալսարանի ֆակուլտետի մեթոդական խորհրդի իրավասությունը, ձևավորման և գործունեության կարգը:
- 1.2 Համալսարանի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը հաստատում է համալսարանի գիտական խորհուրդը:
- 1.3 Ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են նույն կարգով:

2. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի կարգավիճակը և կազմը

- 2.1 Համալսարանի ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ուսումնամեթոդական և գիտամեթոդական հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է, որը կոչված է նպաստելու ֆակուլտետում տարվող ուսումնական և գիտական աշխատանքների կատարելագործմանը և դրանց արդյունավետության բարձրացմանը:
- 2.2 Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ձևավորվում է համամասնական սկզբունքով, յուրաքանչյուր ամբիոնից մեկական անդամ, որոնք մեթոդական խորհրդի անդամ են դառնում ամբիոնների ներկայացմամբ:
- 2.3 Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահին դեկանի առաջակությամբ բաց քվեարկությամբ ընտրում է խորհուրդը:
- 2.4 Ելնելով անհրաժեշտությունից՝ մեթոդական խորհուրդը ռոտացիոն սկզբունքով կարող է փոխել կամ թարմացնել իր կազմը:

3. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի խնդիրները

- 3.1 Ֆակուլտետի մեթոդական խորհրդի խնդիրներն են.

ա) դասավանդվող առարկաների բովանդակության համապատասխանացումը պետական կրթական չափանիշներին և գիտության արդի պահանջներին,

բ) ֆակուլտետում իրականացվող մասնագիտությունների, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի քննարկումը և երաշխավորումը,

գ) նոր և հեռանկարային մասնագիտությունների և մասնագիտացումների առաջարկումը համապատասխան կրթական ծրագրերով,

դ) դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական ձեռնարկների պատվերների ու դրանց գրախոսության կազմակերպումը,

ե) դասավանդվող առարկաների յուրացման նոր, մատչելի, առավել արդյունավետ մեթոդների ու եղանակների առաջարկումն ու ներդրման կազմակերպումը,

զ) լաբորատոր և գործնական աշխատանքների բովանդակային համապատասխանեցումը կարդացվող տեսական դասընթացներին,

է) ընթացիկ, ամփոփիչ, պետական քննությունների հարցաշարերի քննարկումը և երաշխավորումը, մնացորդային գիտելիքների ստուգման հարցաշարերի ձևավորումը,

ը) ուսումնական պրակտիկաների արդյունավետության բարձրացման ուղիների առաջարկումը,

թ) արտերկրից եկած ուսանողների համար կրթական ծրագրերի մշակումը,

ժ) հետբուհական կրթության համար կրթական ծրագրերի մշակումը և առաջարկումը:

4. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի աշխատակարգը

4.1 ԵՄԽՀ-ի ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է դեկանի առաջարկով կամ իր որոշմամբ:

- 4.2 Ֆակուլտետի մեթոդական աշխատանքները ղեկավարում է մեթոդական խորհրդի նախագահը, նա վարում է խորհրդի նիստերը: Ստորագրում է մեթոդական խորհրդից ելնող փաստաթղթերը:
- 4.3 Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերում քննարկվում են աշխատանքային հարցեր, որոնք կարող են լինել պլանային կամ ըստ անհրաժեշտության:
- 4.4 Ֆակուլտետի մեթոդական խորհուրդն իր առաջակություններն ու եզրակացությունները ներկայացնում է ֆակուլտետի ղեկանին կամ համալսարանի մեթոդական խորհրդին:
- 4.5 Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերը արձանագրվում են, նախագահի հանձնարարությամբ, խորհրդի անդամներից մեկի կողմից:
- 4.6 Ֆակուլտետի մեթոդական խորհուրդն իրավունք ունի ֆակուլտետի կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժիններից և պաշտոնատար անձանցից ստանալ իր խնդիրների և լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր:
- 4.7 Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերն իրավազոր են անդամների կեսից ավելիի մասնակցության պարագայում:
- 4.8 Ֆակուլտետի մեթոդական խորհրդի փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է նախագահի ձայնը:
- 4.9 Ֆակուլտետի մեթոդական խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի խորհրդի արձանագրության մեջ մտցնել իր հատուկ կարծիքը: